# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 177-Ա

<<17>> դեկտեմբերի 2024 թվականի        քաղաք Մարալիկ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻՑ ԳՈՒՅՔ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքային ենթակայության <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի տեխնիկական վերահսկողություն իրականացնող հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի եզրակացությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կազմից հանել և դուրս գրել գիշերային լուսավորության համակարգի արդիականացման գործընթացում փոխարինված լուսարձակների ապամոնտաժման արդյունքում առաջացած 655 կգ երկաթի, 618,75 կգ ալյումինի և 346 կգ խառը նյութերի ջարդոնը:

2. Սույն որոշման 1-ին կետով դուրս գրված գույքը, որպես մետաղական ջարդոն, հանձնել իրավասու կազմակերպությանը և ստացված ֆինանսական միջոցները մուտքագրել համայնքի բյուջե:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ՝ 10 | դեմ՝ 0 | ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ------------ ------------ ------------

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ ------------ ------------ ------------

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ ------------ ------------ ------------

Ա. ՇԱԲՈՅԱՆ ------------ ------------ ------------

Հ. ՋԱՏԻԿՅԱՆ ------------ ------------ ------------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ------------ ------------ ------------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ------------ ------------ ------------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ------------ ------------ ------------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ------------ ------------ ------------

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ ------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<17>> դեկտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ